ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՄԱՀԱՓՈՐՁԻ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍԱՐՈԼԻԻՆ

Վատիկան

Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի դեմ կատարված մահափորձը խոր վշտով համակեց Մեր սիրտը:

Անմարդկային այս արարքը մեծագույն ողբերգություններից մեկն ենք նկատում մեր օրերի տառապող աշխարհի:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի, ջերմապես աղոթում ենք, որ Տերը շուտափույթ ապաքինում շնորհի Նորին Սրբությանը և երկար տարիների կյանք՝ շարունակելու Հովվապետական Իր սուրբ առաքելությունը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

Ձեզ վշտակից՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փարիզ,
14 մայիսի 1981 թ.

Հայոց Հայրապետի վերոհիշյալ հեռագրին ի պատասխան Վատիկանից ստացվում է հետևյալ հեռագիրը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Փարիզ, հայոց եկեղեցի

Խորապես զգացված Ձեր համակրանքի արտահայտությունից, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը ի սրտե շնորհակալություն է հայտնում Ձեզ իր ապաքինման վերաբերյալ Ձեր աղոթքի համար:

Եղբայրական հարգալից զգացումներով՝

ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍԱՐՈԼԻ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վատիկան,
15 մայիսի 1981 թ.